

# Կ Ր Օ Ն Ա, Կ Ա, Ն

## Խ Ի Ղ Ճ Ը Զ Ա Ր Թ Ե Յ

(Բարութեան սերմերից).

Սրանից հազար տարի առաջ մեզանից հեռու երկրում՝ Եգիպտոսում, երկար ժամանակ երկիրը սասանեցնում էր մի ահարկու աւազակ՝ Վառվառ անունով։ Ինքը ահագին հասակով, ուժեղ, ճարպիկ, աներկիւղ, սարսափ էր տարածում՝ ողջ աշխարհում։ Մի խումբ գլխից ձեռք վերցրած արիւնարբու աւազակների հետ մեծ ճաշապարհի վրայ կողոպուտ էր անում, յարձակում էր աների վրայ, դաշտերից անասուններ քշում, նրա դէմ ուղարկում էին ամբողջ զօրախմբեր, բայց բոնել անհնարին էր։ Խուզարկուները իւրաքանչիւր վերստի վրայ ամեն մի անկիւն աչքից անց էին կացնում, բայց Վառվառին չէին գտնում, կարծես գետին մտած լինէր։ Ժամանակ առ ժամանակ կարծում էին թէ նա բոլորովին վերջացել է, բայց նոր կողոպուտներն ու աւազակութիւնները յիշեցնում էին, որ Վառվառը կենդանի է և շարունակում իւր սոսկալի գործը։ Այդպէս շարունակում էր երկար տարիներ։ Վառվառը մեծ գանձեր հաւաքեց և սկսեց հանգստութեան մասին մտածել։ Նա յոգնել էր, տարիները իրանց գործը տեսել էին, կռիւներում վիրաւորուած մարմինը ցաւազար էր դարձել. ձերութիւնը մօտենում էր։

— «Բաւական է, մտածում էր նա, ունեցած հարըստութիւնս տասը հոգու բաւական կլինի, կերթամ օտար երկիրներ, հեռու այս տեղերից, պալատներ կշինեմ, սարուկներ կվարձեմ, ձիեր ու կառքեր ձեռք կըրեմ, կապրեմ ինչպէս ազա ու տէր։

Նա սկսեց ճանապարհի պատրաստութիւն տեսնել։ Բնակութիւնից հեռու, հինաւուրց անտառի մէջ, մէկու-

սացած անմատչելի լերան վրայ գտնուում էր մի քարանձաւ, որտեղ թագնուում էր ինքը և պահում կողոպտած բարիքը: Քարանձաւի մուտքը ծածկուած էր թփերով: Թփերի արմատների ներքոյ ծածկուած էր նեղ անցք, որ գնալով լայնանում էր և, վերջապէս դառնում մի մեծ, բարձր, կամարապատ քարանձաւ: Այստեղ Վառվառը միշտ պահում էր գինու և ուտելիքի մեծ պաշար, լուսաւորելու համար իւղ. իսկ ջուրը առատութեամբ հոսում էր պատերից: Այժմ քարանձաւը լիքն էր կողոպուտով՝ ոսկու և արծաթի պարկերով, թանկագին անօթներով, ամենալաւ դանակներով ու սրերով, հազուադիւր քարերով, մատանիներով և մանեակներով: Պէտք էր այդ բոլորը կարգի ձգել և տանել դէպի ծով: Վառվառը սկսում է պատրաստութիւն տեսնել և յիշում է թէ ինչպէս են այդ բաները իւր ձեռքն ընկել: Ահա կաշուէ տոպրակները հազարաւոր նոր, փայլուն ոսկիներով լիքը: Այդ բոլորը մի անգամից է ձեռ. ձգել, Յաջողակ գիշեր էր այն: Վառվառը դարանամուտ է եղել մութ անտառում, ծառային սպանել կողալով, իսկ վաճառականի վրայ յարձակուել էր սրով: Վերջինս հանգիստ կերպով մատնացոյց է եղել ոսկով լիքը տոպրակների վրայ և ասել.

— «Վեր առ, բայց ինձ մի գիպչիր, Աստուած տուեց, դու առար. Աստուած կրկին կվերագարձնի, խնայիր միայն իմ կեանքը: Կինս և երեք երեխաներս վաղուց սպասում են ինձ. ինձ կսպանես, նրանք կմնան որը և անտէր, փողերը վեր առ, բայց հօրն ու մարդուն թող ի սէր որդւոցս և կնօջս: Վառվառը սուրը ձեռին նրա վրայ վազեց: Վաճառականը ծնկաչոք ընկաւ.

— Աղաչում եմ, ի սէր Քրիստոսի խնայիր: Երբէք քո անունը վատութեամբ չեմ՝ յիշի. քեզ համար Աստծուն կաղօթեմ. ինչ պիտի անես իմ կեանքը, խղճս երեխաներիս.

Վառվառը ծիծաղելով մօրթեց նրան:

Հապա ինչ եղաւ նրա ընտանիքը, յիշեց յանկարծ նա այժմ, դուցէ քաղցածութիւնից մեռան, դուցէ կուշտ,

ազատ կեանքից յետոյ չարչարուած են ազգատութեան մէջ. գուցէ երեխաները անխնամ մեծացան և այժմ պարագում են աւազակութեամբ: Եւ այդ բոլորը իւր յանցանքն է, և որ գլխաւորն է ի դուր: Նա սարսափեց: Անտառում փոթորիկ բարձրացաւ. քամին խղճալի ունեւմ էր և հառաչում: Վառվառին այնպէս էր թւում, որ որբացած մանուկներն են լաց լինում:

Ահա մի արկղ՝ նուրբ շինուած կանացի զարդարանքներով լիքը: Այս նոյնպէս ձեռք է բերուած ճանապարհի վրայ: Կառքով գնում էին երկու կին— աղախին և տիրուհի:

Կանգնիր, գոչեց Վառվառը:

Կառապանը դէն ձգեց սանձերը, թաւ նստատեղից և սկսեց փախչել դէպի անտառ: Վառվառը յարձակուեց կանանց վրայ: Նրանք աղաչում էին չդիպչել իրանց.

— Ա՛ռ բոլորը, խնդրում էր տիրուհին, մեզ էլ կապկըպիր թող ճանապարհի վրայ և արձակիր խաղաղութեամբ: Երդուում ենք, որ ոչ սքի մի խօսք չենք ասի քո մասին: Ես տանը երկու մանր երեխաներ ունիմ, նոր եմ կորցրել մարդուս և մանրիկներս կմնան անտէր անտիրական:

Կանայք լաց էին լինում, համբուրում նրա կոշտ ձեռները, ոտներին փաթաթւում, նա երկուսին էլ մորթեց:

Պատից շառաչելով ջուր էր հոսում: Վառվառին այնպէս թուաց, որ իրան մօտենում են սպանուած կանանց, երեխաների և ծերերի ստուերները: Նա վայրենի հայեացք ձգեց իւր շուրջը. ամեն կողմից, կարծես, ստուերներ էին երևում, զսպուած անի ու վախեր, հառաչանքներ լուում: Նա յափշտակութեամբ գլխից բռնեց և դուրս թաւաքարանձաւից: Անտառում քամու սուրոցն ու սոնոցը նրա վրայ աւելի ևս սարսափ բերեց. նա փախչում էր առանց իմանալու, թէ ո՛ր է գնում և ինչի: Գիշերն անցաւ: Արևը ծագեց, լսուեց զանգի ձայնը: Վառվառը ուշքը հաւաքեց: Նա ինչ որ վանքի մօտ էր: Առաւօտեան ժամի զանգերն էին տալիս:

—Վանք, եկեղեցի, աղօթք . . . շնչաց նա: Գնամ  
եկեղեցի, այնտեղ գուցէ թեթևութիւն գտնեմ:

Վառվառը մտաւ բաց տաճարը և հէնց գրան մտ  
ընկաւ գետին: Միաբանները գնում էին աղօթքի, մէկը  
միւսի յետեից անցնում էին Վառվառի մօտով և կանգ-  
նում իրանց տեղը: Ժամերգութիւնը վերջացաւ: Սկսեցին  
դուրս գալ, իսկ Վառվառը պառկած էր, նրան մօտեցաւ  
մի միաբան, երկրորդը, երրորդը—Վառվառը չէր վեր-  
ցնում գլուխը: Ասացի վանահօրը—ձանր վիշտն է երևի  
ճնշում նրան դէպի գետին, ասաց իմաստուն ծերուկը,  
թողէք ինձ նրա հետ:

Ծերուկը ոչ մի խօսք չարտասանելով՝ ճնկաչքը եղաւ  
նրա մօտ և սկսեց լսելի կերպով աղօթել: Վառվառը  
գառնապէս հեծկտում էր:

—Լաց եղիր, որդի, լաց եղիր, ասաց վանահայրը,  
որքան արտասուքը դառն լինի, այնքան կքաղցրանայ սիր-  
տը: Ինչպէս չորացած կեղտը, ցեխը, լուանում են տաք  
ջրով, այնպէս էլ հոգու կեղտը ամենից շուտ կլուացուի  
տաք արտասուքով:

Վառվառը գլուխը բարձրացրեց:

—Դու կարծում ես, հայր, որ արտասուքով կարելի  
է մաքրել հոգու բոլոր կեղտը:

—Այո, որդի, պոռնիկը արտասուքով ձիւնից սպի-  
տակ դարձաւ:

Կեղտը գուցէ կմաքրուի, բայց արիւնը ոչ գիտե՞ս  
արդեօք, հայր, թէ ով է առաջը, ես Վառվառն եմ,  
ահարկու աւազակը: Ես անիծուած եմ՝ մարդկանցից և  
Աստուածանից: Մի՛թէ թողութիւն կայ ինձ:

—Մարդկանց մօտ չկայ, բայց Աստուծոյ մօտ կգտնես:  
Աստուծոյ ողորմութեան չափն ու սահմանը չկայ: Յիսուս  
Փրկիչը աշխարհի բոլոր մեղքը առաւ իւր վրայ: Զղջն,  
աղօթիր: Երկնային Հօր արքայութեան մէջ Յիսուս Քրիս-  
տոսի հետ միասին առաջին անգամ աւազակը մտաւ:  
Գնանք իմ խուցը:

Խցի մէջ վանահայրը սկսեց Վառվառին կարդալ, թէ

ինչպէս Յիսուս Քրիստոս ընդունեց մաքաւորներին և պոռնիկներին, ինչպէս հայրը ընդունեց անառակ սրգուն, ինչպիսի մեծ ուրախութիւն է լինում երկնքում ապաշխարող մեղաւորի պատճառով։

Երկար ժամանակ, եղբայր, դու Աստուծոյ համար մեռած էիր, այժմ կենդանացար. երկար ժամանակ կորած էիր, այժմ գտնուեցար, վերջապէս քեզ էլ հասաւ Աստուծոյ ձայնը։ Աշխատիր չկորսուել այժմ։ Բո հոգու վրայ շատ արին կայ. քեզ շատ ցեխ է կպել, քեզ համար դժուար կլինի այդ բեռով բարձրանալ Աստուծուն։ Նայիր որ կրկին յետ չզլւորուես։ Աստուծոց այժ-կարողութիւն խնդրիր։ Հոգու մեծ սյտ է եղել քո մէջ, սակայն իցաւ արտի դէպի շարն ևս գործադրել նրան։ Գործածիր նրան Աստուծոյ գործի համար։ Մեծ պարտք ունիս դու ինչպէս Աստուծոյ, նոյնպէս և մարդկանց առաջ։ Շտապիր հատուցանել։

— Հայր, պատասխանեց Վառվառը, դու կարդացիր Զարէսի մասին, թէ ինչպէս նա զղջալով ասաց. «Ձկէս ընչից իմոց տաց աղքատաց և եթէ զոք զրկեցի հատուցից նմա չորեքկին»։ Ես բոլոր կայքս կվերադարձնեմ, որին որ կարողանամ. բոլորը կբաժանեմ աղքատներին, ամբողջ կեանքս կնուիրեմ Աստուծոյ։

Վառվառը կատարեց իւր խօսքը. Բոլոր կողովաւ հարստութիւնը բաժանեց և ինքը մնաց վանքում. նա կատարում էր դրոխտ ամենածանր աշխատանքները։ Սիրով ծառայում էր բոլորին և ամեն բանով Շրջակայ գիւղացոց համար անտառից փայտ էր կտրում և տանում, օգնում էր հերկելու մէջ, խնամք էր տանում հիւանդներին։ Ոչ ոք չդիտէր թէ երբ է հանգստանում. նրա աղօթքը, աշխատանքը և պահեցողութիւնը զարմացնում էին բոլորին, սակայն Վառվառը ամբողջ օրերով և գիշերներով հառաչում էր և աղօթում. «Աստուած իմ, սղորմիր ինձ մեղաւորիս. մեծ են անօրէնութիւններս, բայց Բո ողորմութիւնը անչափ է։ Գարձու երեսդ իմ մեղքերից և ջնջիր իմ բոլոր անօրէնութիւնները»։

Այդպէս անցան շատ տարիներ: Վառվառը ծերացել էր. նրա երբեմն ուժեղ ձեռները թուլացել էին, գլուխը սպիտակել, նա այլ ևս չէր կարողանում խցից դուրս գալ: Ամբողջ օրեր էր անցկացնում աղօթքով և կամ իւր մօտ խրատի եկող բազմաթիւ այցելուների հետ զրոյց անելով:

— Ի՞մ բարեկամներ, ասում էր նա ծանր և մտայոյզ ձայնով. ուշադիր եղէք դէպի ձեզ կեանքի մէջ, ձեր ամեն մի քայլին հետևեցէք: Չար կեանքը նման է տղմուտ ճահճի. Հէնց որ մի սաքդ դնես մէջը, իսկոյն կկեղտոտուիս, իսկ եթէ երկու ոտքով մտնես՝ մինչև գլուխըդ կընկղմուիս: «Երիտասարդութիւնից ձեր կեանքը դրէք լաւ ճանապարհի վրայ: Երիտասարդութեան ժամանակ սիրտը մաքուր կլինի, խիղճը արթուն, մի թողէք որ նա քնի: Խիղճը Աստուծոյ պահապանն է, զեկավարը, որ ուղղում է մեր կեանքը բարութեան ճանապարհով: Եթէ պահապանը քնի, իսկ զեկավարը ձեռքից բաց թողնի զեկը, այն ժամանակ քամին կարող է մեզ շատ հեռացնել ճանապարհից. ամեն էլ տեսութիւնից կկորցնես և յետոյ չես էլ իմանայ, թէ որ կողմ՝ շուռ գաս:

«Մեր կեանքը նման է անդադար կառուցուող շինութեան: Տարիներն անցնում են, մենք բարձրանում ենք յարկը յարկի վրայ և ամեն մի յարկը իսկոյն և եթ մի բանով լցնում ենք. ի՞նչ բարութեամբ: Մի վերին աստիճանի ժլատ վաճառական կար, որ ամեն կողմից հաւաքում էր ամեն ձեռքն ընկած բան՝ կեղտոտ շորի կտոր, ժանգոտած մեխ, հին ոտնաման, փայտի մի կտոր, ծռուած պայտ և այդ բոլորը տանում էր և իւր սենեակում մի տեղ հաւաքում: Կարելի է երևակայել թէ որպիսի դարձահատութիւն էր գալիս այդ բոլոր աղբից: Անսովոր, թարմ մարդը կարող է խեղդուել: Այժմ՝ մտածեցէք թէ ի՞նչ է հաւաքուած մեր հոգու վրայ քսան, երեսուն, քառասուն, յիսուն տարուայ ընթացքում. քսան, երեսուն քառասուն, յիսուն յարկանի շինութիւնը ինչով է լցուած, եթէ նոյնպիսի ամենատեսակ աղբով և կեանքի

անպէտք մնացորդներով, այն ժամանակ զարմանալի ոչինչ չկայ, որ մեզ համար դժուար է ապրելը, հեղձուցիչ է, որ մենք խեղդուում ենք շարութեան և անարգարութեան նեղութիւնից, Միլիոնաւոր մարդիկ հազարաւոր տարիներ շնչում են նախանձով, շարութեամբ, շահասիրութեամբ և ամեն տեսակ մեղկութեամբ ու անառակութեամբ և արդէն այնքան են շնչել, որ հէնց իրանք այլ ևս ոյժ չունին համբերելու: Պէտք է աչքից անց կացնել ամբողջ կեանքդ, անցնել բոլոր յարկերով, աչք ածել հոգու ամեն մի անկիւնը, պէտք է մաքրուենք ինքներս, եթէ ուզում ենք որ մեր հոգին մաքրուի: Մեծ քաղաքներում, մեծ աներում շինում են ազրի հորեր, նրանց, որքան հնար է լաւ ծածկում են, այնուամենայնիւ նրանցից դուրս են գալիս դարչահոտութիւններ, որովք թունաւորում են քաղաքների օդը, յառաջացնում են հիւանդութիւններ, մեռցնում են կեանքը: Նրանց աշխատում են յաճախակի մաքրել, ախտահանել, անվտանգ դարձնել, եթէ մեզ վրայ նայենք Աստուծոյ արգարութեան դատաստանի աչքով, այն ժամանակ կտեսնենք, որ այն աստիճան ապականուած ենք, ամեն տեսակ կեղտոտութեամբ. որ մարդկանց մէջ շրջում ենք որպէս կենդանի կեղտոտութեան հորեր, պէտք է մենք ևս յաճախ և լաւ մաքրենք մեզ, ախտահանուենք:

«Ես չափազանց մեղաւոր մարդ էի, ասում էր Վառվառը և հանգիստ էի. խիղճս քնած էր, իսկ երբ նայեցայ իմ հոգուն, յիշեցի իմ ամբողջ կեանքը՝ սարսափեցայ, դողաց իմ խիղճը և զղջման թափած արտասուքս լուաց իմ բոլոր թափած անմեղ արիւնը: Այժմ հանգիստ է սիրտս: Հաւատում եմ, որ Աստուած ներեց ինձ: Հանգիստ էլ սպասում եմ, թէ երբ կկանչէ նա իւր մօտ: Տայ Աստուած, իմ բարեկամներ, որ դուք ևս ձեր կեանքը այնպէս կազմակերպէք, որ մօտենալով Աստծուն, կարողանաք հրճուանքով ասել, «Արդ արձակեա զժառայս քո, Տէր, ի խաղաղութիւն»: Երբեմն այսպէս էր լսօտում մի ժամանակ դռուզ Վառվառը և սիրով հնչում էր նրա ձայնը, պայծառ նայում նրա ծիրանի աչքերը, Ունկնդիր-

ների սրտերը ևս պայծառանում և սիրով էին լցում: վերջապէս մեռաւ Վարվառը: Մարզկանց բազմութիւնը արտասուքը աչքերին յուղարկաւորեց նրան գերեզման: Այնուհետեւ երկար ժամանակ նրանք յիշում էին հեղ ծերուկին, որը իւր անկեղծ, սրտանց տուած խրատներով, շատ լոյս էր մտցրել նրանց կեանքի մէջ: Տայ Աստուած, ընթերցող, որ մեզ համար ևս անհետ չանցնի այս պատմութիւնը:

Պետրովից քարգմ. Գրիգոր Բեկյ. Եւր-Արեւեսանց.

## Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

և քեմեր.

Յունիոի 22-ին Թիֆլիզ ուղևորուեց նորին Վեհափառութիւն ազգիս ծերունազարդ Հայրապետը՝ ուղեկցութեամբ Գէորգ արքեպիսկոպոսի, Նահապետ եպիսկոպոսի, Յուսիկ և Կորիւն վարդապետների: Նորին սուրբ Օծութեան ուղևորութեան նպատակն էր այցելել անձամբ նորին պայծառափայլութեան Կովկասի Փոխարքային, շնորհաւորել նրա գալուստը և փութացնել եկեղեցական կալուածոց և դպրոցների վերաբացման խնդիրը:

Յունիսի 25-ին՝ երբ Վեհափառ Հայրապետը պալատ պէտք է գնար այցելութեան, Փոխարքան ուղարկել էր մի խումբ կողակներ, որոնցից երեք հոգի դրօշակով պէտք է գնային առաջից, իսկ մնացածները Վեհափառի կողքի ետեից:

Վեհափառի շքախմբի մէջ էին նաև Թիֆլիզի Թեմի առաջնորդ գեր. Գարեգին եպիսկոպոս Սաթուհեանը և տ. Սահակ վարդապետը:

Պայծառափայլ Փոխարքան արժանավայել ընդունե-